

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ
ՀՈԳՇ. Տ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՄԵԱՆ ԿԸ ՔԱՐՈՋԷ ՎԷՆ ՆԱՅՍԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

ՅԱՏՈՒԿ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՎԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՀՐԱՆԴ ՏԻՆԳԻ ՀՈԳԻՆ ՀԱՄԱՐ

Կիրակի, Յունուար 24ին ՎԷՆ Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քինյ. Տէմիրճեան: Իսկ օրուան հոգեւոր պատգամը տուաւ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան:

Առաջնորդ Սրբազան Հօր որոշումով եւ Պոլսահայ Միութեան խնդրանքով, Հոգեհանգստեան մասնաւոր Պաշտօն կատարուեցաւ Իսթանպուլի մէջ սպաննուած «Ակօս» Շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Տինգի հոգիին համար:

Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ կատարուած Հոգեհանգստեան արարողութենէն ետք, Եկեղեցւոյ Գարակէօզեան Սրահին մէջ Պոլսահայ Միութեան կողմէ կազմակերպուած էր յիշատակի ձեռնարկ մը: Ցուցադրուեցաւ Սերժ Աւետիքեանի կողմէ պատրաստուած տեսաերիզ մը:

Փակամ խօսքը կատարեց Հայր Սուրբը եւ ապա «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով փակեց յայտագիրը: